ՀՀ Արմավիրի մարզպետ Էդվարդ Հովհաննիսյանի շնորհավորանքի խոսքը Վերջին դասի կապակցությամբ

03.06.2022

Սիրելի՛ շրջանավարտներ,
Ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ ձեր կյանքի նշանակալի իրադարձություններից մեկի՝ Վերջին դասի կապակցությամբ:

Ձեզ համար այսօր չափազանց հիշարժան ու անմոռանալի օր է: Համոզված եմ, որ այս տոնական օրը հարազատ կրթօջախում հնչող Վերջին զանգի ղողանջն ուղեկցելու է ձեզ ողջ կյանքում՝ յուրաքանչյուրիդ մեջ արթնացնելով գեղեցիկ և անմոռանալի հիշողություններ:

Ինչ խոսք, դուք մեր հայրենիքի և անկախ պետության այն հերթական սերունդն եք, որին վերապահված է լինել երկրի կայացման գործում իրական ձեռբերումների ու հաջողությունների շարժիչ ուժը: Քանի որ յուրաքանչյուր հաջորդ սերունդ, դաստիարակվելով ազգային արժեքներով ու հայրենասիրական ոգով, առավել նվիրված է ծառայում իր երկրին:

Համոզված եմ, որ ձեզանից յուրաքանչյուրն այդ արժեքների հետ մեկտեղ ունի նվիրական երազանքներ, հոգու և մտքի մեծ հարստություն: Եվ իմ ցանկությունն է, որ այդ երազանքների իրականացման ճանապարհը դուք անցնեք առաջին հերթին որպես լավ մարդ և մեր երկրի արժանապատիվ քաղաքացի:

Տոնական օրվա առթիվ շնորհավորելով նաև մեր հարգարժան մանկավարժներին և ծնողներին՝ վստահ եմ, որ նրանց սաները, զավակներն իրականություն կդարձնեն իրենց հետ կապված բոլոր սպասումները՝ արդարացնելով այս տարիներին փոխանցած գիտելիքների և սիրո մեծ պաշարը:

Սիրելի՛ շրջանավարտներ,
Կրկին շնորհավորում եմ բոլորիդ Վերջին դասի կապակցությամբ՝ մաղթելով երջանկություն և հաջողություններ մեծ կյանքի ճանապարհին: Թող ճակատագիրը միշտ ժպտա ձեզ՝ իրականություն դարձնելով ձեր մեծ ու փոքր երազանքները: Բարի երթ և ամենայն բարիք բոլորիդ: